# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.12.2018թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/103**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «Մարի Ստեգ» ՍՊԸ-ի կողմից 30.11.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/103 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

**1. «Մարի Ստեգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Մարի Ստեգ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 30.11.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2018/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին 09.11.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Մարի Ստեգ» ՍՊԸ-ն և ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցման՝ ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրվել է եզրակացություն, համաձայն որի «Մարի Ստեգ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (09.11.2018թ.) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն 25 000 ՀՀ դրամ:

Այնուհետև, գնահատող հանձնաժողովի կողմից 28.11.2018թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Մարի Ստեգ» ՍՊԸ-ի ներկայացված հայտը մերժվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն՝ «Մարի Ստեգ» ՍՊԸ-ն 09.11.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օր) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 25 000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ընկերությունը հայտնել է, որ «Մարի Ստեգ» ՍՊԸ-ի մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ առկա ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարման գծով (համապատասխան ապացույցը կցվում է):

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի (հրապարակված է www.arlis.am համակարգում) համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքը ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը ընդհանրապես նախատեսված չէ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի արդեն 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանի (հրապարակված է www.arlis.am համակարգում) համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի նոր ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը նույնպես նախատեսված չէ:

Սակայն ՀՀ ՊԵԿ-ի կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2018/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում բացահայտվել է, որ «Մարի Ստեգ» ՍՊԸ-ն ունի հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարի գծով (նման պարտավորության առկայության փաստը մինչ այդ երբևիցե չի ներկայացվել ՊԵԿ-ի կողմից):

«Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ «Մարի Ստեգ» ՍՊԸ-ն 09.11.2018թ. դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի: Եվ պետք է նշել, որ «Մարի Ստեգ» ՍՊԸ-ի միասնական հաշվի պատկերում արտացոլված չէ դրոշմանիշների վճարի վերաբերյալ որևէ տեղեկատվություն, և Ընկերությունը հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները, ըստ որի՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (09.11.2018թ.) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով

պարտավորություններ չուներ: Միևնույն ժամանակ, «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքում վկայակոչված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի դեռևս 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանը:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դրոշմանիշային վճարների պարտավորության գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը որոշում է կայացնում դրոշմանիշային վճար վճարողից (եթե դրոշմանիշային վճարը, սույն օրենքի համաձայն, պետք է կատարվի հարկային գործակալի միջոցով, ապա հարկային գործակալից) ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում դրոշմանիշային վճար վճարողին (հարկային գործակալին):

Ընկերությունը հայտնել է, որ որևիցե եղանակով երբևիցե չի ծանուցվել «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարի գծով առկա պարտավորության առկայության մասին: Փաստացիորեն առկա է եղել արձանագրված պարտավորության մասով «Մարի Ստեգ» ՍՊԸ-ի իրազեկված չլինելու հանգամանքը, քանզի Ընկերությունը 09.11.2018թ. դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ կարող էր ստանալ միայն «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի»-ից, իսկ ինչպես արդեն նշվել է, նշված քարտի տվյալների համաձայն՝ ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրը չունի հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություն:

Ընկերությունը գտնում է, որ նման դեպքում արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել «Մարի Ստեգ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն:

«Մարի Ստեգ» ՍՊԸ-ն հայտնել է նաև, որ Գնումների հետ կապված բողոքը քննող անձ Է. Սարգսյանի և Մ. Անանյանի կողմից կայացրած թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/98, ԳԲԽ-ԷՍ-2018/104, ԳԲԽ-ԷՍ-2018/111 և ԳԲԽ-ԱՄ-2018/83, ԳԲԽ-ԱՄ-2018/87, ԳԲԽ-ԱՄ-2018/98 որոշումներով նույն հիմնավորմամբ բավարավել են ներկայացված բողոքները և որոշում

են կայացվել դադարեցնել բողոքաբեր ընկերությունների հայտերը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումները՝ ժամկետանց պարտավորությունները դրոշմանիշների վճարների գծով առկա լինելու հիմքով, քանի որ ըստ բողոքը քննող անձի՝ առկա է Ընկերությունների իրազեկված չլինելու հանգամանքը, ինչի ուժով հայտը պետք է գնահատվի բավարար:

Ընկերությունը բողոքով խնդրել է՝ դադարեցնել «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2018/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.11.2018թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված «Մարի Ստեգ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 05.12.2018թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

**2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.**

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 15.12.2018թ. թիվ 1/18-2/76092-18 գրությամբ ներկայացրել է «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2018/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, ինչպես նաև հայտնել, որ գնահատող հանձնաժողովը առաջնորդվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով ու ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 05.12.2018թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3. ԳԲԽ-ԱՄ-2018/103 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

ԳԲԽ-ԱՄ-2018/93 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար գրավոր թարգմանության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2018/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Մարի Ստեգ» ՍՊԸ-ն 09.11.2018թ. հայտ է ներկայացրել:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.11.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Մարի Ստեգ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 27.11.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Մարի Ստեգ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 25 000 ՀՀ դրամի չափով:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.11.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Մարի Ստեգ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

**4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհր Անանյանս, ուսումնասիրելով «Մարի Ստեգ» ՍՊԸ-ի 30.11.2018թ. բողոքը, ՀՀ պետական եկամուտների կոմիտե 15.12.2018թ. թիվ 1/18-2/76092-18 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի

գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար գրավոր թարգմանության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2018/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Մարի Ստեգ» ՍՊԸ-ն 09.11.2018թ. հայտ է ներկայացրել:

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2018/4» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով կազմել է 62 000 ՀՀ դրամ և 10 500 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.11.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Մարի Ստեգ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 20.11.2018թ. համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Մարի Ստեգ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 27.11.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Մարի Ստեգ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 25 000 ՀՀ դրամի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.11.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Մարի Ստեգ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է 09.11.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածք, որի համաձայն՝ Ընկերությունը 09.11.2018թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

Միևնույն ժամանակ «Մարի Ստեգ» ՍՊԸ-ն բողոքին կից ներկայացրել է ՀՀ պետական եկամուտների հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 3 բաժնի կողմից 29.11.2018թ. տրված տեղեկանքը, համաձայն որի 09.11.2018թ. դրությամբ Ընկերության մոտ արձանագրված 25 000 ՀՀ դրամի պարտավորությունը դրոշմանիշային վճարի գծով է:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Այսպիսով՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 27.11.2018թ. տրամադրված եզրակացությամբ արձանագրվել է, որ «Մարի Ստեգ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն, որի չափը գերազանցում է Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը: Առաջնորդվելով Կարգի 44-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը:

Միևնույն ժամանակ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն, ուսումնասիրելով 09.11.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, արձանագրում է, որ նշված քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը 09.11.2018թ. (հայտը ներկայացնելու օր) դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ: Հետևաբար առաջնորդվելով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ՝ Ընկերությունը բարեխղճորեն ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ: Սույն հանգամանքը հաշվի առնելով գտնում եմ, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Մարի Ստեգ» ՍՊԸ-ի կողմից 30.11.2018թ. ներկայացված բողոքը բավարարել և պարտավորեցնել «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2018/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 28.11.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված «Մարի Ստեգ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ